ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա. Փանոսյանի 06.03.2017թ. դիմումի (մուտք №464-17, 09.03.2017թ.) հիման վրա փաստաբան Հարություն Բաղդասարյանի (արտոնագիր թիվ 707) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. **<u>Դիմումի համառոտ բովանդակությունը և դիմողի պահանջը.</u>**

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ նաև՝ Պալատ**)՝ հայտնել է, որ «**Մարտ ամսվա ընթացքում ձայն կհանեն Զենով Օհանը և Քեռի Թորոսը. «Սասնա ծռերն» ուղերձ են հղում**» վերտառությամբ «hraparak.am» համացանցային կայքի հրապարակման միջոցով փաստաբանը, դուրս գալով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված փաստաբանական գործունեության շրջանակներից, փաստաբանական գործունեությանը չվերաբերող հարցերով իր վստահորդների հայացքներն է փոխանցել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, ավելին՝ որոշակի ձևակերպումներով տեղեկություններ է հայտնել մարտ ամսվա ընթացքում սպասվող իրադարձությունների և դրանց մասին իր իրազեկվածության մասին:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է քննարկել փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը, ինչպես նաև օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն ստանալու դեպքում՝ «Փաստաբանության մասին« ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկատվությունը:

22 մարտի 2017թ.
թիվ 69-Ա

2. <u>Փաստաբան Հարություն Բաղդասարյանի համառոտ դիրքորոշումը.</u>

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Հարություն Բաղդասարյանն առաջարկվել է դիմումի վերաբերյալ ներկայացնել գրավոր բացատրություն:

Փաստաբան Հարություն Բաղդասարյանը 14.03.2017 թվականին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի կողմից ներկայացված հոդվածը վերաբերում է իր պաշտպանյալ Պավել Մանուկյանի քաղաքական գործունեությանը, դրանում արծարծված են նրա քաղաքական հայացքները, և ինքը՝ որպես Պ.Մանուկյանի պաշտպան, տարածելով իր պաշտպանյալի գաղափարները, լրագրողին հայտնել է, որ Սասնա ծռերը մարտ ամսին քաղաքական հայտարարություններ են անելու:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասին վերաբերող Դիմողի պահանջի հետ կապված, փաստաբան Հարություն Բաղդասարյանը նշել է, որ որևէ գաղտնիք հրապարակելու խնդիր չկա, քանի որ խոսքը ոչ թե նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին է, այլ՝ ընտրությունների վերաբերյալ հայտարարության, ինչպես նաև հայտնել է, որ ոչ իրեն, ոչ իր պաշտպանյալներին հայտնի չէ որևէ հանգամանք, որն իր մեջ կարող է պարունակել քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հատկանիշներ:

Վերոգրյալի արդյունքում փաստաբանը նշել է, որ իր գործողություններում բացակայում են կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը, ուստի դատախազության դիմումը ենթակա է մերժման:

3. <u>Պալատի եզրահանգումը և որոշումը.</u>

Գտնում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետի դիմումի հիման վրա (դիմումում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում) փաստաբան Հարություն Բաղդասարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը պետք է մերժել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել, եթե փաստաբանի արարքի մեջ առերևույթ առկա է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշներ:

Տվյալ դեպքում փաստաբանին պատասխանատվության ենթարկելու իր խնդրանքը Դիմողը հիմնավորում է այն հանգամանքով, որ «**Մարտ ամսվա ընթացքում ձայն կհանեն Զենով Օհանը և Քեռի Թորոսը. «Սասնա ծռերն» ուղերձ են հղում**» վերտառությամբ «hraparak.am» համացանցային կայքի հրապարակմամբ փաստաբանը՝ դուրս գալով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված փաստաբանական գործունեության շրջանակներից, փաստաբանական գործունեությանը չվերաբերող հարցերով իր վստահորդների հայացքներն է փոխանցել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, ավելին՝ որոշակի ձևակերպումներով տեղեկություններ է հայտնել մարտ ամսվա ընթացքում սպասվող իրադարձությունների և դրանց մասին իր իրազեկվածության մասին:

ՀՀ փաստաբանների պալատը գտնում է, որ Դիմողի կողմից մատնանշված հանգամանքները հիմք չեն կարող հանդիսանալ փաստաբան Հարություն Բաղդասարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար, քանի որ դիմումում նշված արարքը (հաշվի առնելով նաև փաստաբանի բացատրությունը) առերևույթ չի հակասում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և/կամ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) դրույթներին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:***

Նշված նորմը փաստաբանին լիարժեք ազատություն է տալիս օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով իրավաբանական օգնություն ցույց տալ իր վստահորդին: Փաստաբանի այս ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե տվյալ օրենքն ուղղակիորեն արգելում է փաստաբանին իր մասնագիտական գործունեության ընթացքում իր վստահորդի (պաշտպանյալի) իրավուքների պաշտպանությունն իրականացնելիս որևէ միջոցից կամ եղանակից օգտվել: Դիմումով փաստաբան Հարություն Բաղդասարյանին վերագրվող արարքը որևէ օրենքով արգելված չէ, հետևաբար՝ ՀՀ փաստաբանների պալատն այդ վարքագծում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի առերևույթ խախտում չի արձանագրում:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն*:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը կարող է հրապարակել փաստաբանական գաղտնիքը, եթե՝*

1) առկա է վստահորդի համաձայնությունը.

2) դա անհրաժեշտ է նրա և վստահորդի միջև ծագած դատական վեճում կամ կարգապահական վարույթում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար.

3) դա անհրաժեշտ է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը նախապատրաստվող փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածի կամ այդ օրենքով սահմանված լիազոր մարմնի հարցման հիման վրա այդ օրենքով սահմանված դեպքերում և կարգով լիազոր մարմնին տրամադրելու համար, բացառությամբ այնպիսի տեղեկատվության, որը ստացվել է հաճախորդից և այլ աղբյուրներից՝ դատական, վարչական, արբիտրաժային կամ միջնորդային վարույթում հաճախորդին պաշտպանելու կամ նրա շահերը ներկայացնելու հետ կապված օրենքով փաստաբանին վերապահված գործունեությունն իրականացնելիս, ինչպես նաև իրավական խորհրդատվություն տրամադրելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդը խորհրդատվություն է ստանում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը հրապարակում է փաստաբանական գաղտնիքը, եթե առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն*:

Վերը նշված նորմերից հետևում է, որ օրենսդիրը փաստաբանական գաղտնիքի մասով փաստաբանի համար նախատեսել է 3 հնարավոր իրավիճակներ, երբ՝

1. փաստաբանը ***<u>պարտավոր է պահպանել</u>*** փաստաբանական գաղտնիքը (կանոն, 25-րդ հոդված 1-ին մաս).

2. փաստաբանը ***<u>կարող է հրապարակել</u>*** փաստաբանական գաղտնիքը (բացառություն, 25-րդ հոդված 3-րդ մաս).

3. փաստաբանը ***<u>պարտավոր է հրապարակել</u>*** փաստաբանական գաղտնիքը (բացառություն, 25-րդ հոդված 4-րդ մաս):

Դիմողի մատնանշած իրավիճակում փաստաբանի արարքը կարող էր առերևույթ հակասել Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, եթե փաստաբան Հարություն Բաղդասարյանին **<u>հաստատապես հայտնի լիներ</u>** նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն:

«Հաստատապես հայտնի լինել» հասկացությունը նշված նորմի համատեքստում մեկնաբանելիս, ՀՀ փաստաբանների պալատը գալիս է այն եզրահանգման, որ փաստաբանը պետք է համոզված լինի (վստահ լինի), որ իր ձեռքբերած տեղեկության համաձայն նախապատրաստվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն:

Մինչդեռ, փաստաբան Հարություն Բաղդասարյանը 14.03.2017 թվականին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի կողմից ներկայացված հոդվածը վերաբերում է իր պաշտպանյալ Պավել Մանուկյանի քաղաքական

գործունեությանը, դրանում արծարծված են նրա քաղաքական հայացքները, և ինքը՝ որպես Պ.Մանուկյանի պաշտպան, տարածելով իր պաշտպանյալի գաղափարները, լրագրողին հայտնել է, որ Սասնա Ծռերը մարտ ամսին քաղաքական հայտարարություններ են անելու:

Նման պայմաններում (հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի և ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի պահանջները), ՀՀ փաստաբանների պալատը փաստաբան Հարություն Բաղդասարյանի արարքում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի առերևույթ խախտում չի արձանագրում, ինչի արդյունքում փաստաբան Հարություն Բաղդասարյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել՝ փաստաբանի արարքում կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի գրության հիմքում դրվել է ՁԼՄ հրապարակային նյութը, գտնում եմ, որ սույն որոշումը ենթակա է հրապարակման Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.4 հոդվածի, ինչպես նաև Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 12-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Հարություն Բաղդասարյանի (արտոնագիր թիվ 707) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Հարություն Բաղդասարյանին, ինչպես նաև ապահովել սույն որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Ծանոթություն: *Կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին սույն որոշումը շահագրգիռ անձը կարող է բողոքարկել դատական կարգով որոշումը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

22 մարտի 2017թ.
թիվ 69-Ա
ք. Երևան